ՀՈԴՎԱԾՆԵՐ

XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ս. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

XIX դարի հայ հասարակական մտքում ազգի սոցիալ-քաղաքական,տնտեսական, մշակութային կյանքի, առաջադիմության, ազատագրության, դրանց իրականացման վերաբերյալ ձևավորվել են տարբեր վերաբերմունքներ, գնահատականներ, տեսական, գաղափարական հիմնավորումներ: Այդ հենքով 1850-1860-ական թվականներին կազմավորվել են հասարակական-քաղաքական հոսանքները: Խորհրդահայ պատմագիտական, հասարակագիտական մտքի մեջ գերակշռում է հոսանքների հետևյալ բաժանումը՝ կղերաազգայական (կղերաամիրայական), ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական, հեղափոխական-դեմոկրատական (ազգային-դեմոկրատական): Այդ հոսանքների դերն ու նշանակությունը մեկնաբանվել է այնպես, որ զարգացման ու առաջադիմության չափանիշ է համարվել հեղափոխական դեմոկրատիան: Մնացածները հիմնականում համարվել են երկրորդական կամ հետադիմական: Նույն տրամաբանությամբ՝ Մ.Նալբանդյանը, որպես այդ հոսանքի պարագլուխ, համարվել է ժամանակի տեսական, փիլիսոփայական մտքի, ազգային կյանքի ամենաառաջադիմական ներկայացուցիչը:

Նման մոտեցումը, հատկապես ներկայումս, քննադատվում է: Առաջադրվում են հոսանքների ստորաբաժանման նոր սկզբունքներ: Այսպես, Ս. Սարինյանը մերժում է վերը նշված հոսանքներին բնորոշ սոցիալ-դասակարգային ու արևելահայ, արևմտահայ զուգահեռականներով ստորաբաժանման սկզբունքը: Նա իրական ու տրամաբանական է համարում կղերական, ազգային-պահպանողական, ազատամտական, նարոդնիկական հոսանքների գոյությունը[1]: Ա. Սարգսյանը հիմնավորում է կղերական, ազգային-պահպանողական ու ազգային-դեմոկրատական հոսանքների գոյությունը՝ իրենց արմատական և չափավոր դրսևորումներով[2]: Նկատի ունենալով ժամանակի ազգային կյանքը բնորոշող հասարակական-քաղաքական ու գաղափարական իրավիճակը, մենք ընդունում ենք հոսանքների հետևյալ բաժանումը՝ կրոնական, պահպանողական ու ազատական (ազատամտական՝ լիբերալ): Դրանք բոլորն էլ ազգային երևույթներ են (թեև իրենց նախատեսակներն ունեն եվրոպական ու ռուսական իրականության մեջ) և, հետևաբար, ազգային որակավորումը վերաբերում է յուրաքանչյուրին: Այս ընդհանուր համակարգում առաջադրում ենք նաև ազգայնական ուղղության գոյությունը: *Այժմ նշենք այդ հոսանքների ու ուղղության որոշ, նաև հայտնի, առանձնահատկությունները.*

1. Կրոնական հոսանքը ձևավորվել է միջնադարյան ավանդույթների պահպանման հիման վրա: Մինչև XIXդ. 40-ական թվականները (ինչպես ողջ միջնադարում) կրոնական գաղափարախոսությունը եղել է միակ ու տիրապետող

---

[1] *Տե՛ս Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն, Ե., 1998, էջ 40-43:*

[2] *Տե՛ս Ա.Սարգսյան, Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Ե., 2001, էջ 11-15:*

հասարակական գաղափարական երևույթը՝ ազգային կյանքի քրիստոնեական մեկնաբանության սկզբունքներով: Հայության գոյության ու ինքնահաստատման, ազգային արժեքների պահպանման, առաջադիմության հիմնական գործոնը կրոնական հոսանքը համարում է Հայ եկեղեցին, նրա պաշտամունքն ու դավանաբանությունը, դրանց ու ազգի գոյության համար կոչված գրաբար լեզուն, քրիստոնեական բարոյականությունը, վերջինիս ոգով ըմբռնված ավանդույթները, արժեքները: Առավել նշանավոր գաղափարախոսներն են Ն. Աշտարակեցին, Գ. Այվազովսկին, Հ. Ջամուռճյանը, Մ. Մսերյանը:

Կրոնական այս ընդհանուր հոսանքի մեջ առանձնանում է Մխիթարյան միաբանությունը, որը դավանաբանության ու պաշտամունքի հարցերում որդեգրում է կաթոլիկության սկզբունքները, բայց հիմնականում մնում է ազգային մտածողության ու շահի գիտակցման շրջանակներում մեծ աշխատանք ծավալելով ազգային մշակութաստեղծ գործունեության բնագավառում: Այդպիսով հիմնավորվում է նաև մշակույթի միջոցով ազգային հոգեբարոյական, էթնիկ միասնության հաստատման ու պահպանման գաղափարը, որն աշխարհում սփռված, տարբեր դավանանքներով տարանջատված Հայության համար կարող էր ունենալ սկզբունքային նշանակություն: Այս տեսանկյունով են մասնավորապես գործել միաբանության լայնախոհ գործիչները, օրինակ, Ա. Բագրատունին, Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, Մ. Բժշկյանը և ուրիշներ:

Կրոնական հոսանքի ընդհանուր գաղափարախոսությունից, որը հարազատ էր նաև ժողովրդի լայն խավերին, անհրաժեշտ է տարբերակել հոգևորականության (կղերականության) այն մասի գործելակերպն ու անհատականորեն իմաստավորված բարոյական սկզբունքները, որոնք չէին համապատասխանում քրիստոնեության հիմնական պահանջներին և առաջնորդվում էին ոչ այնքան ազգային, որքան անձնական ու դասային շահերի չափանիշներով: Դա կարելի է բնորոշել որպես կղերամտություն:

2. Պահպանողական հոսանքը սերում էր ազգային կրոնական ու աշխարհիկ բազմաղարյան ավանդույթներից: Սակայն ձևավորվել է XIX դ. կեսերին, որպես յուրահատուկ հակազդեցություն լուսավորական, քաղաքակրթական այն նոր գործընթացներին, որոնք, ազգային կյանքի համընդհանուր աշխարհականացման ու եվրոպականացման պահանջի պայմաններում, ակամա վտանգում էին ազգայինի անաղարտության պահպանումը, ինքնությունը, շեղում էին ենթադրում զարգացման բնապատմական, էվոլյուցիոն ընթացքից: Այս հոսանքը լուսավորականության, քաղաքակրթության հոգեբարոյական, մշակութային ու տնտեսական նվաճումներն ընդունելի էր համարում այնքանով, որքանով դրանք կհամապատասխանեին զարգացման էվոլյուցիոն սկզբունքներին, ազգայինի չափանիշներին, չէին հակասի հայկական էթնոպատմամշակութային համակարգին: Այս մոտեցմամբ՝ ազգապահպանման հիմնական գործոններ են համարվել Հայ եկեղեցին ու նրա դավանաբանությունը, ազգային լեզուն, մշակույթը, ավանդույթները, արժեքների համակարգը, տնտեսության տեղական հնարավորությունների զարգացումը, ազգային արտադրողների (հատկապես մանր ու միջին) ձևավորումը, նրանց ու գյուղացիության շահերի պաշտպանությունը: Այս հոսանքը կարելի է բաժանել արմատական (Պ. Շանչյան, Պ. Սիմոնյան, Գ. Սրվանձտյան, Մ. Աղաբեկյան, Ս. Սպանդարյան) և չափավոր, նույնիսկ ազատականությանը ձգտող (Ա. Հովհաննիսյան) թևերի:

Կրոնական ու պահպանողական հոսանքները փոխկապված էին և ունեին

գաղափարական մի շարք ընդհանրություններ: Դրանք ավանդապաշտ էին ու լրացնում էին միմյանց: Բայց, դրա հետ միասին, կրոնական հոսանքն աշխարհի, հասարակության ու մարդու մասին իր պատկերացումներում առաջնորդվում էր կրոնական - աստվածաշնչյան աշխարհայացքի հիմնական գաղափարներով ու դրա էությունից բխող պատմափիլիսոփայական մոտեցումներով: Պահպանողական հոսանքն ազգայինի համար հիմնարար նշանակություն էր տալիս նաև Հայ եկեղեցուն ու նրա դավանաբանությանը, սակայն նրա համար էականն աշխարհիկ մտածողությունն ու գաղափարախոսությունն էին՝ հիմնված նաև գիտության ու փիլիսոփայության նորագույն նվաճումների վրա: Ղ. Ալիշանը և Մ. Խրիմյանը կարծես մարմնավորում էին երկու հոսանքի բնորոշ գծերը, նույնիսկ որոշ դեպքերում, օրինակ ազգային-ազատագրական պայքարի հարցում, մերձենում էին (հատկապես Մ.Խրիմյանը) ազատական հոսանքին:

3. Ազատական հոսանքի առաջացման նախադրյալները ձևավորվել են դարասկզբին (թեև դրա սկզբնավորումը կարելի է կապել Մադրասի հայ լուսավորիչների գործունեության հետ): Սակայն ազատական հոսանքը, որպես այդպիսին, ձևավորվել է 1850-1860-ական թվականներին՝ ազգային կյանքը լուսավորականության ու ժամանակի քաղաքակրթության իդեալներին համապատասխան վերափոխելու, կրոնական ու պահպանողական հոսանքների քննադատության, ավատատիրության արմատական մերժման, բուրժուական (երբեմն նաև սոցիալիստականի մոտեցող) հասարակական-քաղաքական, տնտեսական հարաբերություններ հաստատելու, ազգային-ազատագրության խնդիրը ավելի վճռական միջոցներով, նաև զենքի օգնությամբ, լուծելու գաղափարական պահանջների համակարգում: Սա նույնպես հանդես է եկել արմատական (Մ. Նալբանդյան, Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Գ. Արծրունի, Ռաֆֆի) ու չափավոր (Սերվիչեն, Ստ. Նազարյան, Ն. Ռուսինյան, Գ.Օտյան, Ստ. Պալասանյան, Ե. Տեմիրճիպաշյան, Ռ. Պերպերյան) թևերով: Այս հոսանքի հետ են հատկապես կապված հայ իրականության մեջ ժողովրդավարության սկզբունքների, աշխարհիկ հումանիստական գաղափարախոսության տարածումը, դրանց կենսագործման համար մղվող պայքարը, արմատականությունը: Այս պատճառով այդ հոսանքը որոշ ուսումնասիրողներ բնորոշում են ժողովրդավարական (դեմոկրատական):

Ազգային կուսակցությունների (Արմենական, Հնչակյան, Հ.Հ. Դաշնակցություն) առաջացմամբ, մարքսիստական գաղափարախոսության տարածմամբ այդ հոսանքների պատմական առաքելությունը հիմնականում ավարտվում է: Դրանց որոշ ծրագրային սկզբունքներ ու գաղափարներ որդեգրում են կուսակցությունները: Սակայն հոսանքների՝ մասամբ արդիականացված գաղափարները, իսկ կրոնականինն ուղղակի իմաստով, պահպանվում են մինչև դարավերջ, մասամբ փոխանցվում են նույնիսկ XX դարի սկիզբը (կրոնականինը՝ մինչև մեր օրերը): Հոսանքների վերը հիշատակված, նաև մեր ու ցանկացած այլ համանման ստորաբաժանման դեպքում դուրս է գալիս, որ հայ գաղափարական, հասարակական մտքին միայն բնորոշ են եղել ներքին հակասությունները, տարանջատվածությունը, բացակայել է տարբեր հոսանքներին կամ դրանք ներկայացնող առանձին գործիչներին ընդհանուր շահի ու սկզբունքի շուրջ համախմբող հնարավորությունը: Այնինչ, դրանց բնորոշ է նաև ընդհանրությունը: Չնայած գաղափարական ու աշխարհայացքային տարակարծություններին, ազգային խնդիրների լուծման հարցում ունեցած էական

կամ.ոչ էական տարբերություններին՝ կապված նաև անհատական մոտեցումնե
հետ, որոնք այս պարագայում էական չի կարելի համարել, ազգայինը նրա
համար մնում է հիմնական գերխնդիր: Այդ ընդհանրությամբ, մեր կարծիքո
XIX դարում ձևավորվում է ազգայնականությունը (ազգայնական ուղղությունը
որը համախմբում է ազգայինով առաջնորդվող ողջ մտավորականությանը, անկա
փիլիսոփայական ու հասարակագիտական ըմբռնումներից, դավանաբանակա
տարբերություններից: Այդ ուղղությանը հատկապես մեծ շունչ է հաղորդո
ազգայինի գերակայությունից ելնող հայ նոր մտավորականությունը
Ազգայնական այդ ուղղությունը ոչ մի ընդհանրություն չունի ազգայնամոլությա
հետ: Այդ ուղղությունը որդեգրել է դարերից եկող ազգային ավանդույթներ
որոնք հայ եկեղեցու համակարգում պահպանվել էին ազգայինով առաջնորդվ
հոգևոր գործիչների ջանքերով, ինչպես նաև ժողովրդական, աշխարհ
մտածողության մակարդակներում: Ազգայնական ուղղությունը դրան
հարստացրել ու իմաստավորել է նաև ժամանակի հասարակագիտությա
փիլիսոփայության, գիտության այլ ճյուղերի նվաճումներով ու լուսավորո
կանության պահանջներով՝ նպատակ ունենալով ազգայինի ու համամարդկային
ընդհանուր համակարգում ինքնահաստատված տեսնել նաև սեփական ազգ
առաջնորդվել ազգային շահի ու գաղափարախոսության իդեալով: Ա
գաղափարախոսության ու ուղղության հիմնական միտումը, սկզբունքը կարե
է համարել նաև հայկականությունը՝ նկատի ունենալով ազգին բնոր
էթնոպատմամշակութային հիմնական որակի՝ հայկականի պահպանման
զարգացման իրողությունը:

Ազգայնական այդ նոր մտածողությունը ձևավորվել է Ն. Աշտարակեցո
Հ. Ալամդարյանի, Խ. Աբովյանի, Մ. Թաղիադյանի գործունեությամբ: Ա
որդեգրել ու զարգացրել են Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյան
Հ. Սվաճյանը, Գ.Օտյանը, Գ. Արծրունին, Ռաֆֆին, Մ. Մամուրյանը, Սե
Պալասանյանը, Գ. Սրվանձտյանը, Ղ. Ալիշանը, Մ. Խրիմյանը, Մ. Օրմանյանը, Լ
Հովհաննիսյանը և ուրիշներ: Պահպանողականների գաղափարախոսությունն ա
համակարգում ուներ առանցքային նշանակություն: Դա ազգային ավանդույթնել
անմիջական կրողն էր, մեծ լիցք էր հաղորդում նշված ուղղությանը
հավասարակշռություն հաստատում.կրոնական ու ազատական հոսանքների միջև
Ազգայնական ուղղությունը ձևավորվում է որպես յուրօրինակ ինքնահաստատմա
ու ինքնապահպանման գիտակցական հակազդեցություն՝ թուրքական
ռուսական գոյություն ունեցող և հնարավոր հակահայ քաղաքականությանը, նո
օսմանականության, համաիսլամականության ու համաթուրքականությա
գաղափարախոսությանը և, ընդհանրապես, ազգայինի կորստի ու ազգի ձուլմա
ցանկացած դրսևորման՝ Հայաստանում և հայկական գաղթօջախներում: Դարի
բնորոշ ազգերի համընդհանուր զարթոնքի պայմաններում դա պատմական
հասարակական-քաղաքական անհրաժեշտություն էր այնքանով, որքանով, ասենք
իտալական, հունական, լեհական, բալկանյան ժողովուրդների ազգայնա
կանությունը և ուներ ընդգծված ազգապաշտպան նշանակություն:

Ազգայնական ուղղության ընդհանուր ոգին պահպանվեց նաև XX դարու
Խորհրդային Հայաստանի ու սփյուռքահայ մտավորականության, ժողովրդի այ
մասի գիտակցության ու գործելակերպի մեջ, որն առաջնորդվում էր ազգայինո
և իր իդեալների իրականացումը, անկախ անգամ կուսակցական պատկա
նելությունից ու պայմանականություններից, տեսնում էր ազգայինի մեջ: Դ
հատուկ է նաև մեր օրերին:

К ВОПРОСУ ОБ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННЫХ ТЕЧЕНИЯХ XIX ВЕКА

С.А.САРГСЯН

Резюме

В настоящее время в арменоведении делаются попытки переосмыслить роль и значение армянских общественных течений XIX века. Существовали религиозное, консервативное, либеральное течение, а также национальное. Идейными носителями национального направления были все те представители указанных течений, для которых определяющими были национальные интересы и задачи (С. Назарян, М. Налбандян, М. Мамурян, Г. Алишан, М. Хримян и др.).